

«Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման Համաժողով»

Միջգերատեսչական խմբի նիստի

ք. Երևան

18 մարտի 2015թ.

Օրակարգ՝

1. «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի գործողությունների ծրագրի համար ներկայացված առաջարկությունների քննարկում և հաստատում:

2. «ArmlGF» ինտերնետ կառավարման համաժողովի անցկացման և զեկուցման համար առաջարկվող թեմաների ընտրություն:

3. Այլ հարցեր:

Միջգերատեսչական խմբի անդամներից ներկա էին՝

1. Գագիկ Թադևոսյան, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ (խմբի նախագահ)

2. Շաքե Մեժլումյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

3. Արսեն Գաբրիելյան, ԱԱԾ

4. Սամվել Հովսեփյան, ՀՀ ոստիկանություն

5. Հայկ Չոբանյան, ԻՏՁՄ փոխտնօրեն (առցանց)

6. Վլադիմիր Սահակյան, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ

7. Սամվել Մարտիրոսյան, Տեղեկատվական անվտանգության փորձագետ

8. Գրիգոր Սաղյան, «Ինտերնետ Հանրություն» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավար Գագիկ Գրիգորյանը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման վարչության պետ Սուրեն Պետրոսյանը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ Նորայր Ստեփանյանը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման բաժնի գլխավոր մասնագետ Արման Գալստյանը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի աշխատակազմի ղեկավար Արայիկ Վարդանյանը (լիազորագրով), «Ինտերնետ Հանրություն» ՀԿ վարչության անդամ Լիաննա Գալստյանը, «Յուքոմ» ՍՊԸ տեղեկատվության անվտանգության բաժնի ղեկավար Կարեն Գասպարյանը (լիազորագրով), «ԱրմենՏել» ՓԲԸ իրավաբանական տնօրինության բիզնեսի իրավական ապահովման բաժնի իրավախորհրդատու Նարինե Ավագյանը, «Նոյան տապան հոլդինգ» ՍՊԸ ներկայացուցիչ Գայանե Հարությունյանը (լիազորագրով), ՀՀ գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ Գագիկ Սարգսյանը (լիազորագրով):

Նիստից բացակայում էին միջգերատեսչական խմբի անդամներ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լուսինե Սարգսյանը, Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդական Հովհաննես Նիկողոսյանը, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Տիգրան Զարգարյանը և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Լիաննա Դոյրոյանը՝ հարգելի պատճառներով:

Միջգերատեսչական խմբի ղեկավարը առաջարկեց քննարկել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ առաջարկություններ չներկայացվեցին խմբի անդամների կողմից: Միջգերատեսչական խմբի ղեկավարի կողմից օրակարգը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն բոլոր անդամների կողմ ձայներով:

**Քննարկվեց՝**

1. «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի գործողությունների ծրագրի համար ներկայացված հետևյալ առաջարկությունները:

- 1) Հայկական Ինտերնետ Կառավարման համաժողովի (ArmiGF) օրակարգի մշակում, շահագրգիռ կողմերի ներգրավում, մասնակցության ապահովման համար միջոցառումների իրականացում:
- 2) Եվրոպական Ինտերնետ Կառավարման երկխոսության (EuroDIG), Համաշխարհային Ինտերնետ Կառավարման համաժողովի (IGF), Ռուսական Ինտերնետ Կառավարման համաժողովի (RIGF) միջոցառման մասնակիցների թեկնածությունների քննարկում և հաստատում:
- 3) Տեղական ինքնակառավարման մարմինների կայքերի անխափան գործունեությանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում:
- 4) Ինտերնետից օգտվելու առավել ընդհանուր վարվելաձևի ցանկի մշակում և առաջարկում այդ վարվելակերպի մասին տեղեկատվության տարածումը օգտվողների միջև՝ ընգրկելով դպրոցական տարիքի երեխաներին:
- 5) IPv6 և DNSSEC արձանագրությունների ներդրմանն ուղղված առաջարկությունների հավաքագրում, ուսումնասիրություն և առաջարկությունների մշակում՝ ըստ անհրաժեշտության:
- 6) Ուսումնասիրել օգտվողների կողմից գաղտնագրման համակարգերի կիրառման նպատակահարմարությունը, ՀՀ տարածքից դուրս գտնվող շտեմարաններում, այդ թվում ամպային, տվյալների պահպանման անվտանգության ապահովման հնարավորությունը և ներկայացնել առաջարկություններ:
- 7) WIPO-ի կանոնակարգով դոմենային անունների վեճերի հետ կապված հարցերի լուծման մասին ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում:
- 8) ՀՀ տարածքում գործող օպերատորների միջև տեղեկատվական հոսքերի երթուղիների ուսումնասիրություն, տրաֆիկի փոխանակման կետերի օգտագործման նպատակահարմարության ուսումնասիրություն, ՀՀ տարածքից դուրս Ինտերնետ տվյալների հոսքի երթուղիների ուսումնասիրություն, արդյունավետ երթուղիների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- 9) Լավագույն միջազգային և տարածաշրջանային փորձի ուսումնասիրում համակարգչային պատահարների արձագանքման կենտրոնների արդյունավետ օգտագործման վերաբերյալ և առաջարկությունների ներկայացում:
- 10) Երեխաների առցանց պաշտպանության հայեցակարգի սկզբունքների մշակում:
- 11) Տնտեսական, օրենսդրական, տեխնիկական միջոցների օգտագործմամբ գործնական միջոցների առաջարկում տվյալների փոխանցման և հեռախոսակապ հասկացությունները գործող ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:
- 12) Ուսումնասիրել ոչ աշխարհագրական համարների օգտագործման հնարավորությունը ՀՀ տարածքից դուրս և ներկայացնել առաջարկություններ:

- 13) Ուսումնասիրել միջազգային փորձը սոցիալական ցանցերում օգտատերերի կողմից այլ անձանց անունով կամ անանուն հանդես գալու երևույթը, որն ուղեկցվում է այլ քաղաքացիներին վիրավորելով ու զրպարտելով և ներկայացնել առաջարկություններ:
- 14) Ուսումնասիրել այլ երկրներում Ինտերնետ բովանդակության սահմանափակման հետևանքով ՀՀ-ում այդ բովանդակության հասանելիության ապահովման հարցը, այն դեպքում, երբ այդ սահմանափակումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը և ներկայացնել առաջարկություններ:
- 15) Ուսումնասիրել սևումնական հաստատություններում բաց կոդով ինտերնետում օգտագործվող բազային ծրագրավորման լուծումների դասավանդման հնարավորությունները և ներկայացնել առաջարկություններ:
- 16) Ուսումնասիրել արտասահմանյան լավագույն փորձը դոմենային անունների գրանցման վերաբերյալ:
- 17) Ուսումնասիրել միջազգային փորձը կիբերհանցագործությունների դեմ կոնվենցիայով սահմանված ապօրինի բովանդակություն տարածող .am դոմենային անունների արգելափակման մեխանիզմները:
- 18) Ուսումնասիրել ինտերնետ ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ՀՀ օրենսդրությամբ արգելված կայքերի և ինտերնետ ռեսուրսների գործունեությունը ՀՀ տարածքում արգելափակելու հնարավորությունները և ներկայացնել առաջարկություններ:
- 19) Ուսումնասիրել լավագույն միջազգային փորձը կիբերհարձակումներից պաշտպանության տեխնիկական հարթակների կառուցման և դրանց զարգացման հնարավորությունները և ներկայացնել առաջարկություններ:
- 20) Ուսումնասիրել միջազգային ստանդարտացման մարմիններում հայերենի ամբողջական ներկայացման հնարավորությունը և առաջարկություններ անել հայերեն լեզվի ստանդարտները միջազգային ստանդարտների ցանկում ներգրավվման վերաբերյալ:
- 21) Ուսումնասիրել արտաքին կապի կորուստի դեպքում երկրի ներսում Ինտերնետ ծառայությունների լիարժեք ապահովման հարցը և ներկայացնել առաջարկություններ:
- 22) Ուսումնասիրել համակարգչային տեխնիկայում հայերեն լեզվի կիրառման հետ կապված հարցերը և ներկայացնել առաջարկություններ:
- 23) Ուսումնասիրել Ինտերնետ օգտագործողների մտավոր մակարդակի բարձրացման հարցը՝ վնասակար ծրագրեր ներբեռնելու և տեղադրելու վտանգից խուսափելու նպատակով:

Բոլոր ներկայացված կետերը քննարկվեցին և հաստատվեցին միջգերատեսչական խմբի կողմից:

2. «ArmiGF» Ինտերնետ կառավարման համաժողովի անցկացման և զեկուցման համար առաջարկվող թեմաների ընտրություն:

Միջգերատեսչական խմբի քարտուղար Գրիգոր Սաղյանը ներկայացրեց «ArmiGF» Ինտերնետ կառավարման համաժողովում զեկուցման համար առաջարկվող թեմաներ:

- 1) Հայաստանի Ինտերնետ կառավարման սկզբունքների մշակումն ու ընդունումը
- 2) Հայաստանի Ինտերնետ կառավարման բազմաշահառու մոդելը
- 3) Զանգվածային լրատվամիջոցը և Ինտերնետը. Իրավունքները և պատասխանատվությունը
- 4) Հայկական շարժական Ինտերնետը. Զարգացումներն ու խնդիրները
- 5) Մտավոր սեփականության իրավունքները և Ինտերնետ աղբյուրներին ազատ մուտքը
- 6) Հայաստանի ՓՄՁ ներկայությունը Ինտերնետում. Ինչու՞ է այն սակավաթիվ
- 7) Ազգային հետազոտական և կրթական ցանցի (NREN) խնդիրները
- 8) Ֆիքսված լայնաշերտ Ինտերնետը. Առկա իրավիճակը և հետագա զարգացումները
- 9) Առցանց կրթություն. Ինչպե՞ս լավագույնս օգտագործել Ինտերնետում անվճար կրթական աղբյուրները
- 10) Հայաստանի միասնական էլեկտրոնային գրադարան. Երազա՞նք, թե՞ իրականություն
- 11) Հայաստանի մարզերի դպրոցները և գրադարանները. Խնդիրներն ու լուծումները. E-rider-ի փորձը
- 12) Օռանժի Ինտերնետը զարգացման փորձը Հայաստանում
- 13) Ինչպե՞ս ապահովել հայկական Ինտերնետ անվտանգությունը
- 14) Գերարագ Ինտերնետ միացում Հայաստանում
- 15) Էլ-հասարակություն. Էլ-կառավարության ծառայություններից մինչև էլ-ներգրավում
- 16) Ի՞նչ խոչընդոտներ կան Էլ-կառավարության ծառայությունների ներդրման (կիրառման) համար
- 17) Հայկական Ինտերնետ բլոգոսֆերան և սոցիալական ցանցերը. Վերջին զարգացումները
- 18) Երեխաների անվտանգությունը Ինտերնետում
- 19) Հայկական Ինտերնետ փոխանակում
- 20) Էլ-գործիքներ Էլ-հասարակության համար
- 21) Ի՞նչ հնարավորություններ կան երիտասարդ մասնագետների համար ներգրավվելու միջազգային Ինտերնետ Կառավարման գործընթացին
- 22) Միջազգայնացված Դոմենային անուն (IDN) Հայաստանի համար. .huy տիրույթի գործարկումը
- 23) Ինտերնետի հենքով Խելացի Քաղաք գաղափարի կիրառումը Երևանում
- 24) Ինտերնետ լրագրություն
- 25) Միջազգային հեռահաղորդակցության միության դերը Ինտերնետում

- 26) ICANN հաշվետվությունը և IANA գործունեության փոխանցումը
- 27) Արվեստը և Ինտերնետը
- 28) Հեռա-բժշկություն
- 29) Բաց կառավարման գործընկերություն
- 30) Ինտերնետ մատչելիությունը հատուկ կարիքներով մարդկանց համար
- 31) Մարդու իրավունքներ
- 32) Լայնաշերտ Ինտերնետ թափանցելիությունը գյուղական տարածքներում
- 33) Ինտերնետ կառավարումը կիբերհանցագործությունների և կիբերպատերազմների պայմաններում
- 34) Ինտերնետ տեղայնացում. տեղական երթուղում և տվյալների տեղայնացում
- 35) Ցանցի չեզոքություն
- 36) Տեղական բովանդակության զարգացմանն ուղղված միջավայրի ստեղծում և ապահովում

Առաջարկվեց ներկայացնել համաժողովի թեմաների ցանկի վերաբերյալ առաջարկություններ՝ ուղղված ինչպես ցանկում ընդգրկված կետերի ավելացմանը, այնպես էլ նվազեցման: Վերջնաժամկետը սահմանվեց մինչև ս.թ. մարտի 31-ը:

### 3. Քննարկվեց ArmiGF համաժողովի անցկացման ժամկետը:

Առաջարկվեց համաժողովն անցկացնել աշնանը, հանձնարարելով քարտուղարությանը ճշգրտել ժամկետը՝ հաշվի առնելով Երևանում անցկացվող ոլորտին առնչվող միջոցառումների ժամանակացույցը:

### 4. Այլ հարցեր

ՀՀ ԻԿՀ միջգերատեսչական խմբի քարտուղարությունը ներկայացրեց խմբի պաշտոնական կայքը, այն է՝ igf.am, որը աշխատանքային փուլում է և հարցադրում կատարեց միջգերատեսչական խմբի անգլերեն և ռուսերեն անվանման համար:

Անգլերեն տարբերակ՝ «Internet Governance Council»

Ռուսերեն տարբերակ՝ «Совет по Управлению Интернетом»

ՀՀ ԻԿՀ միջգերատեսչական խմբի անվանման ներկայացված անգլերեն և ռուսերեն տարբերակները ընդունվեցին միաձայն՝ բոլոր անդամների կողմ ձայներով:

ՀՀ ԻԿՀ միջգերատեսչական խմբի քարտուղարությունը տեղեկացրեց, որ ս.թ. ապրիլի 7-ին Մոսկվայում տեղի է ունենալու Ռուսական Ինտերնետ Կառավարման ամենամյա համաժողով: Առաջարկվեց ԻԿՀ միջգերատեսչական խմբի նախագահ Գագիկ Թադևոսյանի թեկնածությունը այդ համաժողովին մասնակցելու համար: Միաժամանակ առաջարկվեց, որ

միջգերատեսչական խմբի նախագահի մասնակցության անհնարինության դեպքում Ռուսական Ինտերնետ Կառավարման համաժողովին մասնակցության թեկնածուին առաջարկի ԻԿՀ միջգերատեսչական խմբի քարտուղարությունը՝ ֆինանսավորման առկայության դեպքում:

### Որոշվեց՝


1. Քննարկման արդյունքում արտահայտված կարծիքների հիման վրա քարտուղարությանը հանձնարարվեց խմբագրել «Հայաստանի Հանրապետության Ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի գործողությունների ծրագրի համար ներկայացված առաջարկությունները, խմբագրված փաստաթուղթը ուղղարկել շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին համաձայնեցման համար և վերջնական տարբերալր ներկայացնել միջգերատեսչական խմբի նախագահի հաստատմանը:

2. Ներկայացնել համաժողովի թեմաների ցանկի վերաբերյալ առաջարկություններ՝ ուղղված ինչպես ցանկում ընդգրկված կետերի ավելացմանը, այնպես էլ նվազեցման: Վերջնաժամկետը սահմանվեց մինչև ս.թ. մարտի 31-ը::

3. Սահմանել ՀՀ ԻԿՀ միջգերատեսչական խմբի անվանման անգլերեն տարբերակը «Internet Governance Council» և ռուսերեն տարբերակը՝ «Совет по Управлению Интернетом»:


4. Հանձնարարել քարտուղարությանը ներկայացնել ArmIGF համաժողովի աշնանը անցկացման ժամկետը՝ հաշվի առնելով Երևանում անցկացվող ոլորտին առնչվող միջոցառումների ժամանակացույցը:

Նախագահ՝



Գագիկ Թադևոսյան

Քարտուղար՝



Գրիգոր Սադյան